

ՏԱՍԵՆԵՐՈՐԻ ՏԱՐԻ

ՄԵՆԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարեկանը 6 ռուբլ:

Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանից հարադրություններ:

Օտարադպրացիք զինում են ուղևորի

Тифлис. Редакция «Менк»

Խմբագրատունը ըստ է առաջադրված 10—2 ժամ

(Բացի կիրակի և տոն օրերից)

Յայտարարում իմն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարությունների համար գնալուց են

իրարանցիկը ըստին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Նամակ խմբագրին: Ներքին լուրեր: ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Հեղինակի շահագրգիռ: լրագրի յօդուած: «ПОРЯДОК» լրագրի թղթակցութիւն: Նամակ Թիֆլիսից: Արտաքին լուրեր: ՀՆԱԿԱԿՈՒԹԵՐ: ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ: ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ: Գաւթի բէկ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Մասկա, յունիսի 8

Խնդրեմ երկուօրի տեղ չնորոգել «Մշակում»: Նամակովս եւ չեմ պաշտպանում ոչ ոքի, այլ, ինչպէս ընթերցող հասարակութեան մի անդամ, արտայայտում եմ այն տպաւորութիւնը, որ թուողից ինձ վրա մի չափազանց տխուր երեւոյթ:

Ում որ թանգէ աշխարհաբար լեզուի զարգացումը, նրան չեն կարող չը վերաւորել «Փարոսի» վերջին տետրի վերջին տողերը: Համարձակում եմ կարծել, որ ամեն մէկը կը համաձայնի այն մտքի հետ, թէ աշխարհաբար կանոնաւոր զարգացման նպատակով միջոցներէն մէկը պէտք է լինի պարբերական մամուլը: Այստեղ ստեղծվում են նոր բաներ, նոր դարձածանքներ, այստեղ ընկալանալիս որոշվում է այն կամ այն քերականական ձևեր գերազանցութիւնը ուղիղի առաջ, այստեղ պարզվում են միայն գործնականացն առանց թէօրեական դատողութիւնների բազմաթիւ վիճելի հարցեր լեզուի վերաբերութեամբ: Պարզ է, որ մեր պարբերական հրատարակութիւնների դերը աշխարհաբար զարգացման խնդրի մէջ չառ նշանաւոր է ծանր է: «Հիւսիսափայլ», «Մշակ», «Մեղու», «Փարոս» և «Մանկավ. թերթ» — դրանք բոլորն էլ իրանց ունեւորն համեմատ նպատակ է նպատակում են նոր բաներ գրականական լեզուի կազմակերպութեանը: Իսկ «Փարոսը» մասնակցում է արդեօք

ԴԱՆԻԹ ԲԵԿ

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն Վ Է Գ

(1722—1728)

Մէլիք-Փարսադանի ձեռնարկութիւնը իսկապէս չէր հակառակում Բայնդուր իշխանի դեմադրութեանը, այլ աւելի նպատակում էր նրան: Իրաւ է, որ հայերը զինված էին լաւ հրացաններով, որ սպանանցի վաճառականները միջնորդութեամբ, Ռուսաստանի և Կասպից ծովի վրայ, ստացվել էին Եւրոպայից: Հայ զինուորը առաջին անգամ տեսնում էր իր հրացանի ծայրին սուլին և այդ այնքան զուարճացում էր նրան, որքան մի նոր խաղալիք երեխայի ձեռքում:

Որի ընդհակառակն, թշնամու հրացանները բոլորովին հին ձևի էին և սաստիկ ծանր: Նրանք սուլիներն փոխառն ունէին իրանց ծայրին երկնդի եղջերներ, որ չինված էին փայտից և ծառայում էին որպէս նեղուկ: Եղջերները այնպէս էին յարմարեցրած, որ հեշտութեամբ չարժվում էին. արձակելու ժամանակ կարելի էր նրանց ուր ծայրերը սարսանել գետնի մէջ, որպէս երկու ոտիկներ, և հրացանի փողը հորիզոնական ձեւով կանգնեցնել նրանց վրա: Այդ այն յարմարութիւնն ունէր, որ ծանր հրացանը զուգըջուն ձեռքի մէջ բնաւ չէր շարժվի: Իսկ երբ պէտք չէր գործ անել, կարելի էր եղջերները հրացանի փողի ուղղութեամբ շուռ առաւ, այդ դրութեան մէջ նրանք սուլին ձև էին ստանում, միայն փայտից չինված: *)

*) Այդ տեսակ եղջերաւոր հրացաններ այդ

այդ ընդհանուր աշխատութեանը: Այո, ինչպէս չէ՞ միայն հակառակ կողմից: Բաւական չէ, որ նա յամառութեամբ հետևում է հին, փոսած աւանդութիւններին լեզուի մասին, բաւական չէ, որ նա արհամարհում է նոր կեանքի կենդանի պահանջները: *) «Փարոսի» հրատարակողը թող է տալիս իրան մի վարմունք, որ կարելի է ներել մի գոռոզ բերթկարտի իր ստորադերձների վերաբերութեամբ, բայց մամուլի ներկայացուցչին — երբէք: Եթէ ընթերցողը յիշում է արանից մի փոքր առաջ լեզուագէտ պ. Սարգսեանը իր գեղեցիկ յօդուածում հիմնաւորապէս քննել էր «Փարոսի» անկանոն և դժուարամարտ լեզուն: «Փարոսում» ընթերցողը կը գտնի պատասխան, մի տարօրինակ, մամուլի ներկայացուցչի կողմից մի անվայել պատասխան — «զրեցէք ինչքան ուզում էք, մենք ձեր խոսքերը լսող չենք... Գրեցէք», լցրէք «Մշակի» էջերը, ձեր խոսքը մեզ համար կը լինի ձայն բարբառող յանապատի... Ի՞նչ հասկանանք այս պատասխանից: Չէ որ դրա ամեն մի բառը չնշում է կրթով, կամակրութեամբ և կապրիզով:

Գրեւել, գտնելու և փաստերով հակաճառելու ընդունակութիւնը առել է Աստուած: Բուրբոնութիւնն էր պակաս մեր անբաղդ մամուլին, — ճշմարիտ որ պակաս էր: Ամեն բան արին նրա հետ: Նրան զարժին տգիտութեան և յետադիմութեան արտայայտիչ, նրան անարդ կերպով ծառայեցրին ամեն մի վայրենի, կոպիտ ինտելիկետներ, նրան զարժին մասնաւոր, անձնական հաշիւների օրգան, նրա միջոցով ցինիկութեան և ուշուցառութեան արուեստի մէջ վարժութիւններ անել չամաչեցին — գէներալական սրտում մի էր պակաս, պակաս էր բլբլկատական կապրիզը, ԵԱՊԱՐԵՏԵՍ... Դրան էլ արժանացաւ մեր մամուլը: Խեղճ!

Ս. Գաղանց

*) Խօսքս միայն «Փարոսի» խմբագրական լեզուի մասին է:

Անձրեւ մանրիկ կաթիլներով դեռ մազվում էր: Բարեբախտաբար ցեխ չէր գոյացնում. առաջուտ հողը ծծում էր իր մէջ վերինից թափված խոնավութիւնը: Բացի դրանից, լեռների տափաւրակները պատած էին կամ խիտ խոտաբույսերով, կամ սարակած ապառաժներով, որոնց վրայից վազում էր ջուրը:

Այդ բոլոր հանգամանքները լցնում էին մէլիք-Փարսադանի սիրտը անսահման ուրախութեամբ: Երեւոյն զօրապետը, կարծես, կրկին մանկացել էր խոտաբույսերով աշխոյժ և եռանդ էր ստացել: Խորտակված, միմանց վրա դիպված ծայրերը, պատի նման ուղղաձիգ ապամասերը, լեռների գոտաբերանները՝ զարկուղներ, և տեղ-տեղ խորին խորամանկները ամենին չէին վճատեցնում նրան: Իր զօրքերի առաջն անգամ, խորախուսում էր ներանց, սիրտ էր տալիս, և յորդորում էր առաջ մղվել:

— Դէ, դաւակներս, այդ սարն էլ անցնենք, թշնամին մեր ձանկերի մէջ կը լինի:

Իսկ նրա դաւակները առիւծի նման առաջ էին գնում, և բնաւ պէտք չուէին հրամանատարի քաջախելութեանը:

Երբ բաւական տարածութիւն անցան, ծերունի զօրապետը հրամայեց զինուորներին, որ փոքր ինչ հանգիստ առնեն, կազդուրվեն, վերջնական յարձակումը գործելու համար: Նրանք անկանոն կերպով նստատեղիներ քարերի վրա: Ոմանք սկսեցին ծխել, ոմանք իրանց պարկերի միջից դուրս բերելով արաղի փոքրիկ սրուակները, խմում էին և իրանց ընկերներին համեցէք էին անում: Նրանց զուարթ երեսները, շառագունած, փթթած լեռնային օդից ու եղանակի զովութիւնից, ար-

կողմերում այժմ գործ են անում որսորդները, երբ պէտք էր խոչոր կենդանիներ սպանել:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Այսօր, չորաթ օր, յունիսի 20-ին վրաց թատրոնական խումբը ստալու է Արթուրու թատրոնում Լուիզ-Փիրարէլի: Մի կնոջ ասանջանը պիեսան: Ներկայացումը լինելու է յօգուտ խմբի կառավարիչ պ. Չաբկիայի:

Իրգիւրից մեզ գրում են հետեւաւ: «Իզդիւրի» 3 վերստ հեռու խաղաղութեան գիւղում մի երիտասարդ փորձում է բռնաբարել իր քրոջ աղջկան, տանելով նրան դաշտը: Աղջկիւր ընդդիմանում է նրան, այն ժամանակ սա կայսրում է օրիորդի ձեռքերն ու ստները և սկսում է ծեծել նրան: Գարծը շուտով յայտնվում է, գնում են դաշտը և գտնում են աղջկան կիսամեռն բնկած, կապած ձեռքերով: Տղան փախել է Թիֆլիս, իսկ գործը յանձնվել է ընդիւնդին:

Մեզ գրում են որ Իզդիւրի գաւրջը փակված է հողաբարձութեան թուլութեան պատճառով: Երեք ամիս է որ ուսուցիչների ուսմանը վըճարված չեն: Ուսուցիչները ստիպվեցան դատաստանի դիմել, իսկ հողաբարձութիւնը բուրովին անտարբեր է մնում: Թղթակիցը հրաւրում է այդ անցքի վրա թեմական տեսչի ուշադրութիւնը:

ՂԱՐԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ: Մեզ գրում են որ այդպիսի միջոց ծառերը այս տարի բոլորն էլ որդեակեր եղան, բայց կեռամաներից: Ամեն մի տերևի վրա անհաշիւ որդուներ կան բուն դրած:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«ՃԵՐԻՏԷ ՀԱՄԱԿԻՄ» ԼՐԱԳՐԻ ՅՕԴՈՒՄԾ

Ճերիտ «Ոսմանեան Արիա» փերսագրով երկար յօդուած մը կը հրատարակէ այն ա-

տայայտում էին խորին շառականութիւն: Կարծես, խնձոքի մէջ էին նստած, կամ հարսանիքի հանդէս էին կատարում:

Ձիւղուորները մի առանձին համազգեստ ունէին, այլ կրում էին իրանց տեղային հագուստը, որ պատասխանում էր հայ կնոջ ձեռքով մանված բուրթից, նրա ձեռքով գործված չալից: Եւ նրա մասներով կարված «գէյանայից»: Այդ փոքր ինչ կոշտ գործուածները այն առաւելութիւնն ունէին, որ անձրեւի տակ թրջվելով, աւելի պնդանում էին և բոլորովին անթափանցիկ էին դառնում: Այդ պատճառով, նրանք խիտ անոճ կերպով նստած էին անձրեւի տարափի ներքոյ՝ միայն իրանց գէյները ծածկելով վերաբերուներին տակ:

Մինչ զինուորները նստած հանգստանում էին, ծերունի զօրապետը ոտքի վրա անհանգիստ կերպով այս կողմ և այն կողմ էր գնում: Երբեմն կանգնում էր նա և ականջ էր դնում: Միին թուղպերի թանձրութիւնից, մի յիստու քայլ հեռաւորութեան վրա, ուլիս չէր կարելի տեսնել: Աչքի փոխարէն ծառայում էր ականջը: Երեւոյն զօրապետի լսողութիւնը, չը նայելով նրա հասակին, դեռ չէր կորցրած իր վաղեմի արութիւնը: Դա հետազոտում էր ամեն մի աննշան շուրջ, քննում էր ամեն մի անորոշ հնչիւն և ձայնածայի: *) Նման նրանցից գուշակութիւններ էր անում: Դա կանչեց իր մօտ Ալեքանդրի զնգապետին, ասելով.

— Նկատում ես, թշնամու հրացանների ձայնը հիմայ սկսեց նստալի, երեսում է անձրեւ թող չէ տալիս նրանց շուռ-շուռ կրակ տալ:

*) Չայնահայ նշ. ձայններից գուշակութիւններ անող, որպէս էին Արմաւիրի սօսիաց անտառի քուրմերը:

ուսուտ, յորում Օսմ. Ասիոյ տէրութեան միւս մասերէն աւելի կարեւորութիւն ունենալը յայտնվով կրէ թէ Ռուսիա Պարսկաստանի հետ համաձայնութեամբ մեզ կրնայ փնտել, բայց մեզի համար աւելի փառնաւորը Ռուսիոյ Հայերը Պոլսոյ Հայոց հետ քաղաքականապէս միացնեն է, Ռուսիա մտադիր է Տաճկաստանի Հայերը շահելով, Պուլգարիոյ խաղը Հայաստանի մէջ ալ խաղալ, որով Ասիոյ կողմէն նորանոր դժուարութիւններ պիտի ծագին մեր առջեւ:

Ճերիտ հետեւեալ կերպով կը շարունակէ:

«Պոլսոյ հայկական մամուլը այս նպատակին գործիք ընելու ջանք մը կայ, և անցեալ օր մեր գրած առեւելոսն ասոր տպացոյց է: Տփլիս այժմ քօմիթէներու կազմութեան կեդրոն եղած է, ուր Ռուսիոյ Հայոց բարեկեցութեան և Քիւրտերու հարստահարութեանց վրայ կը խօսուի շարունակ և եթէ իրաց այս փիճակը նկատողութեան չառնուի, մեծ խնդիր մը կրնայ ծագիլ. փասն զի չենք կրնար ըսել թէ Հայոց մէջ Չաւն Գօֆնեբուռնման անձինք անպակաս են, որք ՅՏ տարի գաղտնի գործելով, զմեզ յանկարծ ահ կի թերին:

«Թէև չենք յուսար որ հաստատում Հայք Ռուսիոյ ուկրաններուն մէջ իյնան, սակայն Ռուսաց և Պարսից բերանները Քիւրտերու երեսէն եղած հարստահարութիւններն յեղեղելով միշտ, բնական է որ խնդիր մը ծագի: Երբ զանգատները շատնան, հաւանական է որ պ. Կատսիմն ալ

— Եւ էլ այդպէս եմ կարծում, պատասխանեց գնդապետը, ինքն էլ նոյնպէս ականջ դնելով:

— Նկատում ես, դարձեալ հարցրից ծերունի զօրապետը, — հրացանների ձայնը աւելի մօտից է լսվում, երեսում է: Թշնամին մեզանից շատ հեռու չէ գտնվում:

— Նրանք այդ բոլորի հետեւին են, խօսակցութեան մէջ մտաւ կաղ Օսմանը, յանկարծ յայտնվելով, կարծես, գետնից բուռաւ նա:

— Ի՞նչ գիտես, հարցրից ծերունի զօրապետը հետաքրքրութեամբ:

— Մի ժամ առաջ ես նրանց բանակի մօտից անցայ, այնքան մօտից, որ կարողացայ բոլորը տեսնել: Եւ նա սկսեց պատմել իր տեսածները, որից երեսց, թէ թշնամին բաւական բազմաթիւ է, թէ նրանց հրացանները, թէ և բանի պէտք չեն, բայց ամենքն ունեն սրեր, որ ձեռնամերձ կռիւի ժամանակ կարող են գործ անել: Մի քանի ուրիշ մանրամասնութիւններ ես հաղորդեցից յետոյ, աւելացրից նա:

— Երեսում է, Բայնդուր իշխանը բաւական հեռու է գնացել, և գուցէ անցել է Կիրճի միւս կողմը: Թշնամին, որպէս ես նկատեցի, հոսը առել է. պատրաստվում էին շարժվել դէպի այն կողմը:

— Բայնդուրից շատ խեղ չեն տեսնի, ասաց ծերունի զօրապետը ծայրալով, և դարձաւ դէպի Ալեքանդրի գնդապետը:

— Մերանք բաւական կազդուրվեցան, հիմայ պէտք է վրա տալ. սկզբում հրացանի բռնել, յետոյ սկսել ծակծկել...

Ալեքանդրի գնդապետը Գաւթի բէկին հետ վըրաստանից եկած քաջերից մէկն էր, մօտ քառասուն տարեկան մի տղամարդ, որ յայտնի էր իր յանդուգն և անվահեռ անձնավատահութեամբ:

պիտի միջնորդէ. ուստի մեր բոլոր ուշադրութիւնը այժմէն Սամ. Ասիոյ վրայ պէտք է դարձնել: Եւ սակայն Ասիոյ մէջ ոչ Պարսից և ոչ Ռուսաց խօսքը պէտք է կատարել, այլ այնպիսի ընթացք մը բռնելու ենք որ թէ Ռուսաց և թէ Պարսից բերանը գոցուի, Հայոց զանգատանաց վերջ տրուի և Քիւրտերն ալ զսպուին, ապա թէ ոչ Շէյխ Ուսթուլաճը կամ այն ինչը ձերբակալելով գործ չը լինար:

«Մենք չենք կրնար ըսել թէ Հայոց զանգատները հիմն ունին և ոչ ալ թէ Քիւրտերը բնաւ հարստահարութիւն չեն ընել. վասն զի հաւկիթներն անգամ մէկ-մէկու հետ կը զարնուին, ուր մնաց երկու այլասեռ ազգերս Մարդկային բնութենէն է որ երկու տաճիկ մէկմէկու հետ կամ մահ-մետական մը քրիստոնէի մը հետ թշնամութիւն կրնան ունենալ, սակայն ասոնք սո ելի անհատական կռիւներ են և ոչ ազգային ընդհանուր թշնամութիւն:»

«Իրաց այս վիճակը Ռուսաց շատ նպաստաւոր ըլլալով պէտք է մեր ուշադրութիւնը այս անկարգութեանց վրայ դարձնենք և անոնց առաջն առնենք: Մասնաւոր թէ Անգղիացոց արդի անզոյշ ընթացքն ալ իրաց վիճակը կը ծանրացնէ. ասոնք այլ և այլ հիւսկառոյցներ զրկած են ի Հայաստան, և ասոնց թարգմաններն ու ծառայները, որ Ռուսական զործիքներ կրնան կոչուիլ, իրենց տէրերուն գաղափարները կը շրջեն, ալ երեւակայելու է թէ այս տեսակ թերադրութեամբ Լոնտրոն զրկուած հիւսկառոյցական տեղեկագրերը ինչ կարեւորութիւն կրնան ունենալ:

«Ռուսիա կը ջանայ Հայերը հրապուրել և ռուսահայ զօրավարաց տրուած ինչ ինչ շքանշաններ և շքերդ ունեցնելը մեր Հայերը կը հրապուրեն:»

Միով բանիւ Սամ. պետութիւնը իւր Հայերը պէտք է Ռուսաց և Պարսից արծիւէն պաշտպանէ. Անգղիացիք ծովային թռչունի կը նմանին, մինչդեռ Հայք ծովու վարժուած չեն. և կարծիքս թէ երբ անգամ մը անոնց յարկն, մէկ մ'ալ ինքզինքնին չը

պիտի կարենան գտնել:»
«Երջապէս Բ. Գուռը պէտք է որ հետեւեալ միջոցները գործածէ.

Ա. Կարելի եղածին չափ Քիւրտերուն բնակութեան տեղ տալ.

Բ. Քիւրտերը կրթել.

Գ. Քիւրտերը երկրագործութեան պարսպանել.

Դ. Հայոց կրթութեան օգնել.

Ե. Հայ քահանայները Ռուս գործակատարաց հետ յարաբերութեան մանկէ արգելուլ.

Զ. Հայերը հրապուրելու համար Տփլիսի մէջ հրատարակուած ֆուտակար լրագիրները ճաշկատան մանկէ արգելել.

Է. Ռուսիոյ սահմաններուն ուշադրութիւն ընել:

Ը. Հայաստանի մէջ զանգատանաց պատճառները վերջացնել, քննութիւն կատարել և անիրաւները, ինչպէս նաեւ զրպարտիչները պատժել:

Թ. Քիւրտերու և Հայերու մէջ եղած ատելութեան վերջ տալ:

«Այս մասին աւելի երկար պիտի խօսինք վերջը, մանաւանդ թէ առաջարկութեանց իւրաքանչիւրին վրայ առանձին առանձին յօդուածներ պիտի գրեմք:»

(Հայրենիք)

«ПОРЯДОКЪ» ԼՐԱԳԻՐ ԹՂՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ

«Порядокъ» լրագրի մէջ տպւած է հետեւեալ թղթակցութիւնը Բերլինից: Գերմանական կիսապաշտօնական մամուլը առանց ամաչելու նկարագրուած է գերմանական լայնասագր իրեն ամենալաւ օրինակ տալ ազատամարտի խօսակցութեան վատ ազդեցութեան, որ ֆեոստում է իշխանութեան ձեռնարկած գեղեցիկ գործերին: Մինչդեռ եթէ հարկաւոր լինէր ապացուցանել, որ մի երկրի պետական զործերի կանոնաւոր ընթացքի համար միակ ապա-

հովութիւնը ժողովրդի ներկայացուցիչներին օգնութեամբ կառավարելն է, այդպիսի ապացոյց կարելի է բերել նոյն իսկ ստորագրած և սահմանափակած գերմանական լայնասագր: Գերմանական սահմանադրութիւնը ինքն ըստ ինքեան մի առանձին կանոնադրութիւն է, որ աշխարհի ոչ մի սահմանադրութեան նման չէ: Այդ սահմանադրութիւնը ինքն իրան հակասուած է և զանազան իշխանութիւններին վերաբերեալ գործերը այնքան խառնված են, որ մինչև անգամ գերմանական պետական մարդիկ չիթթում են: Սահմանադրութեան այդ օրգանական պահասութիւնները լրացրեց իշխան Բիսմարկ: Ոգուտ քաղելով այն հանգամանքից, որ սահմանադրութեան համեմատ իրաւաբանական կողմից կայսերական կառավարութիւնը շատ փոքր իշխանութիւն ունի, իսկ իրականապէս կարող է ազատ գործել, որովհետեւ ենթարկված չէ կուսակցական ազդեցութեանը և անփոփոխ է, իշխան Բիսմարկ փոքր առ փոքր խանգարեց պարլամենտի կազմակերպութիւնը: Բիսմարկի գործունէութեան ամփոփոխ եղանակը եղել է առաջին՝ իւրաքանչիւր առանձին հարցի վերաբերութեամբ համաձայնել այս կամ այն կուսակցութեան հետ նրան աննշան զիջումներ անելով և երկրորդ, ուշադրութիւն չը դարձնելով պարլամենտի ցանկութեանը, անդադար ներկայացնել մերժված օրինագիծերը, մինչև կը կազմվի նրա ցանկացած մեծամասնութիւնը և օրինագիծը կը վաւերացնէ: Այդ միջոցին նա աշխատում է ազդել հասարակական կարծիքի վրա մի գունդ կիսապաշտօնական գործերով: Գործունէութեան այդ եղանակը այն հետեւանքն ունեցաւ, որ պարլամենտական կուսակցութիւնները, որոնք չէին ենթարկվում իշխանի ազդեցութեանը ամբողջապէս, բաժանվեցան բազմաթիւ մասերի առանձին նախագիծերով, իսկ այդ մասերը անկարող էին լինում իրականապէս ազդել գործերի ընթացքի վրա: Ընդհանուր ուղղութեան վերաբերութեամբ այդ մասերի հայեացքների զանազանութիւնը այն-

քան աննշան է, որ օտար երկրացի այդ մեծ գոտարութեամբ է հասկանում: Այդ զանազանութիւնը նրանումն է կայանում, որ այս կամ այն մասը մինչև որ աստիճան պատրաստ է ենթարկվել Բիսմարկի ազդեցութեանը: Միայն կենտրոնական կուսակցութիւնը, որ կազմված է կաթոլիկներից, չենթարկվեցաւ Բիսմարկին և յայտնեց, որ նա կընդդիմադրի կանցլերի քաղաքականութեանը, մինչև չը դադարի կուլտուրական կռիւը և այդ յայտնութեանը կենտրոնը հաւատարիմ մնաց: Այդ կուսակցութեան ընդդիմադրութիւնը ժողովրդի ցանկութեան համեմատ էր և այդ իրողութիւնը նրանով է ապացուցվում, որ կենտրոնը իր ընտրողական շրջաններից ոչ մէկը չը կորցրեց: Բայց մինչև անգամ այդ փակված, բացառական կուսակցութիւնն էլ բաժանվեցաւ իշխանի աշխատանքով: Հոգի մի հետ բանակցութիւններ սկսելով և մի քանի աննշան զիջումներ անելով, նա բաժանեց կենտրոնը, այնպէս որ այդ կուսակցութեան մասերը առանձին առանձին էին ձայն տալիս վերջին շարժվալ ընթացքում և նրա անդամները մինչև անգամ մի քանի անբաւականութիւններ ունեցան միմեանց հետ:

Այնու ամենայնիւ հասարակական կարծիքի նշանակութիւնը և բարոյական պատասխանատւութեան ազնւացող ոյժը այնքան մեծ է, որ, չը նայելով պարլամենտին շրջապատող տխուր պայմաններին, գերմանական լայնասագր թղթը չը տուեց ոչնչացանի իրան և կարողացաւ պաշտպանել թէ պետութեանը և թէ ժողովրդին նրանց սպառնող գոգադրութիւնները: Այդ կողմից մանաւանդ լաւ ապացուցութիւն գործեցին բուհարկութիւնները արհեստագործների, տնտեսական խորհրդի գումարների և գաղտնատեսական տուրքերի մասին: Այդ երեք հարցերը լայնասագր վճռեց կառավարութեան կարծիքների հակառակ և ժողովրդի շահերի համեմատ: Արհեստագործների մասին օրէնքը ընդունվեցաւ ընդհանուրապէս, բայց իրաւունքը և ազատութիւնը

— Պէտք է սկսել... կրկնեց նա ծերունի զօրապետի վերջին խօսքը:— Մենք բաւական ժամանակ կորցրինք: Թէև արեւը չէ երևում, բայց կէսօր է արդէն: Մենք մինչև այժմ պէտք է մաքրէինք ճանապարհը: Շուտով կը հասնեն բէկի զօրքերը, բայց մինչև նրանց հասնելը, այդ անպիտաններին պէտք էր քշել ճանապարհից:

Այդ կարծ պատերազմական խորհրդից յետոյ, որ կատարվեցաւ ոտքի վրա, ծերունի զօրապետը հարկաւոր պատուէրները տուեց գնդապետներին, և հայկական զօրքը մի քանի խումբերի բաժանելով, սկսեցին գնալ:

Թէև ամպամած մթնոլորտի մէջ անկարելի էր նշմարել թշնամուն, բայց նրանք արդէն գիտէին, թէ գլխաւորապէս որտեղ էր ամրացած նա: Կալ Օհանէսի հաղորդած տեղեկութիւնները բոլորովին ուղիղ էին: Նա ճշտութեամբ լրտեսել էր թշնամու բանակը: Պէտք էր անցնել մի բլուր. թշնամին նորա ետեւումն էր: Իսկ բլուրը անցնելու համար բաւական զօրաւորութիւններ կային, նրա գաղաթի վրա կանգնած էին մի խումբ թուրքեր, որ միջին ստուերի նման նկարված էին հօրիզոնի վրա: Նրբ բլուրովին մտնեցան, ծերունի զօրապետը ձայն տուեց:

— Կրակ...

— Եկեցէ Գաւիթ բէկ, գոռացին հայ զինւորները և նոյն վայրկեանում հրացանները միմեանց օրոտացին: Թանձր ծուրը միախառնվեցաւ միջին թուրքերի հետ և սոսկալի դղրդիւնը շանթերի բռնկման նման կոտորածով տարածվեցաւ լեռների մէջ:

Հօրիզոնի վրա նկարված ստուերը չքացաւ: Երևում էր, թուրքերի խումբը կամ ընկաւ, կամ ցրվեցաւ:

— Դրանք այդպէս են, ասաց հայ զինուորիկները մէկը իր ընկերին:— Երբ վրա տաս, կը

փախչեն, երբ յետ դառնաս, դազան կը դառնան:

Առաջին կրակից յետոյ կրկին տրեց խուլ ռուսթիւն: Միայն լսելի էր լինում սուլմաների խշխշոցը, որոնցով դարձեալ լցնում էին հրացանները:

Եւ իրաւ, բլուրի գագաթի վրա կանգնած թշնամու խումբը ցրվեցաւ խիստ փոքր կորուստով: Նրանք պահանքներ էին և աւելի ոչինչ: Բայց գլխաւոր ուժը գտնվում էր բլուրի միւս կողմում:

Հայ զինուորիկները առանձին խումբերով, գաղաներով արագութեամբ անցան նոյն բլուրի գագաթի վրա, որտեղ առաջ կանգնած էին թշնամու պահակները: Այդ զիջքին տրեղը մի մեծ յաջողութիւն էր, որ կատարվեցաւ կէս ժամվայ մէջ:

Բլուրի գագաթը այնքան սրածայր չէր, որպէս հեռուից երևում էր: Այստեղից տարածվում էր մի հարթ ապփարակ, որ պատած էր խոտով: Տեղ-տեղ բուսել էին ողորմելի թուփեր, կամ կարելի էր տեսնել մի-մի վայրերի տաններն:

Անձերը գաղաթի վրա, երկինքը փոքր առ փոքր պարզվում էր: ամպերի ետեւից ազատ կերպով տեսնվում էր արեւի սքողված բլուրակը:

Օղի լնեմութեան միջից թշնամին նկատեց հայ զինուորիկների մօտենալը, և մի քանի զամբուրակներ արձակվեցան դէպի հայոց զօրքը:

— Այդ անպիտանները թնդանթներ էլ են սուսեցել, բացականչեց ծերունի զօրապետը ուղիղ այն րօպէսում, երբ ռուսներին մէկը ընկաւ նրանից մի քայլ հեռու:— Տղերք, կրակ տուեցէք:

Այս անգամ ոչ բլուրը միաւրի, այլ իւրաքանչիւր խումբ փոփոխակի կերպով սկսեցին հրացաններ արձակել և մի և նոյն ժամանակ

առաջ խաղալ: Թշնամու կողմից հրացաններ շատ փոքր թւով էին արձակվում. նրանք պատասխանում էին զամբուրակներով, որ երեք հատից առել չը պիտի լինէին: Կռիւր այս կերպով շարունակվեցաւ մի ամբողջ ժամ:

Այդ միջոցին Ալեքանդր գնդապետը, մօտենալով ծերունի զօրապետին, ասաց.

— Այդ երեխայական խաղից ոչինչ չի դուրս գալ, հրամայեցէ վերջնական կերպով յարձակուած գործեն:

— Այժմ վտանգաւոր է... պատասխանեց ծերունի զօրապետը վերջին ինչ վրդոված ձայնով:— Նայեցէք, թշնամու բանակները միացան:

Գնդապետը նայեց դէպի այն կողմը, որ ցոյց տուեց ծերունի զօրապետը: Նա տեսաւ, իրաւ, թշնամու միւս զորաբանը, որ գտնվում էր կիրճի ալ կողմում, (այսինքն այն կողմում, որտեղից պէտք է անցնէր Բայնդուր իշխանը) թուրքերով լի դիրքը, եկաւ, միացաւ առաջինների հետ:

— Պատրաստ եմ երգվել, որ Բայնդուրը այդ յիմարներին մոլորութեան մէջ է ձգել, խօսեց Ալեքանդր գնդապետը ուրախութեամբ ծափ տալով:— Դուք ինչպէս էք կարծում, մէլք:

— Շուտով կը յայտնվի պատասխանեց ծերունի զօրապետը:— Բայնդուրը գործի մէջ գանցառութիւն չէ սիրում, նա ինքը տեղեկութիւն կը տալ մեզ: Բայց մինչև տեղեկութիւն ստանալը պէտք է այդ բլուրը, որ մենք ձեռք բերեցինք, պահպանել:

Մինչ հայ զօրապետները այսպիսի անորոշ կարծիքների մէջ էին, թշնամու բանակները միմեանց հետ միանալով, աւելի և աւելի ստուաւրացան: Եւ նրանք, որ մինչև այժմ պաշտպանութեան դիրք էին բռնած, սկսեցին յարձակուած կերպարանը ընդունել:

«Եւ Ալի... գոռացին հաղաբաւոր ձայներ և լեռները լնդացրին վայրերի աղաղակներով:

Այդ սրբազան անունը լցնում է մասնագիտակներ սիրով կատարող զինուորականներ, այդ անունը հետ կապված է նրա բոլոր կրօնական զգացմունքը, այդ անունը արտասանելիս նա մոռանում է ամեն ինչ՝ թէ իր անձը, թէ իր կեանքը, և խաւար մոլեռանդութեամբ պատրաստ է բռնելը գոհել նրա սիրոյ համար:

«Եւ Ալի... կրկնեցան աղաղակները և սոսկալի փոթորիկ նման բոլորը միաւրի յարձակում գործեցին:

«Եկեցէ Գաւիթ բէկ, գոռացին հայոց քաջերը և պատասխանեցին թշնամուն հրացանների կրակով:

Գետինը ծածկվեցաւ դիակներով: Բայց թշնամին դրանից չը վնասեց, մի երկրորդ յարձակում եւ գործեց: Զամբուրակները այժմ աւելի ստեղծ և ստեղծ կերպով սկսեցին որոտալ: Հայերը ոչ մի թնդանթ չուէին, միայն ժայռերի ետեւում պատսպարված, թուփերի մէջ թաքնված, կամ խրամատների խորութեան մէջ մտած, հրացաններ էին արձակում:

Այդ միջոցին մի երկատարող, երեսից քրտինքը սրբելով և հալի շուշ քաշելով, մօտեցաւ ծերունի զօրապետին, ասելով.

— Եւ ողորմեց ձեզ մօտ Բայնդուրը իշխանը. ասաց իմ կողմից շատ բարեւ արա մէլքին, յայտնէր, որ պարսից թագաւորի չքովմանը լիճը մ'աղէ կ'սփռւի մի անգամ, այժմ թշնամին մի երկուսի մէջ տեղումն է գտնվում, եթէ հոռաւոր ունես, բանացրու, գուցէ այն կողմից, եւ այդ կողմից:

Պէտք էր ծանօթ լինել Բայնդուր իշխանի միտք արտայայտելու ձևի հետ, որ կարելի լինէր հասկանալ նրա իմաստը: Իսկ այդ անգամ նրա

խանգարող յօդուածները մերժած են Գա-
տաժողովան անդամները մասին վճիռը տալու
որ նրանք փոքրամասն լինելով 1/3 աղքատ-
ների համար Այդ վճիռը կայացաւ լայն-
ստաֆի համար անսպասելի կերպով: Հարցը
վերջացած էին համարում, երբ պատգա-
մաւորները մէկը մի գեղեցիկ ճառ խօսեց,
պաշտպանեց աղքատներին, որոնք դատա-
տանական տուրքերի մեծութեան պատճա-
ռով զրկուած են արդարադատութենէն, և
առաջարկեց աղքատներին համար տուրքերը
փոքրացնել: Այդ առաջարկութիւնը խիստ
ընդունակեցաւ Արքեպիսկոպոս լայնստաֆի
մէկը տալ հարկաւոր գումարը անտեսական
խորհրդի համար: Բայնստաֆի մերժեց
այդ պահանջը, ոչ թէ նրախան հան-
գումանքները ի նկատի առնելով, այլ որով-
հետեւ այդ հիմնարկութիւնը անխնայ էր,
ստեղծված չէր օրէնսդրական ճանապարհով,
այլ կայսերական հրամանով և մի և նոյն ժա-
մանակ նպատակ ունենալով վնասել ժողո-
վրդական ներկայացուցիչներին: Այս գեղ-
քում մեծ ծառայութիւն մատուցին աղա-
տամիտները, որոնք յիշեցին, թէ գերմանա-
կան ազգութեան պատմական կոչումը այն
չէ, որ նա հաւանութիւն տայ միւս ազ-
գութիւններին վրա գործած բռնութիւն-
ներին և պաշտպանի մի մարդու կամայա-
կանութիւնը, ինչքան մեծ ծառայութիւն
ներ էլ մատուցած լինի այդ մարդը պե-
տութեանը:

Իշխան Բիւմարկին և նրա կիսապաշա-
նական լրագրողներին ամենից շատ զայրաց-
րեց պահանջողականների վարմունքը ար-
համաւորների և անտեսական խորհրդի
հարցերի վերաբերութեամբ: Այդ կուսակ-
ցութեան մի բաժինը, որ «կայսերական» է
անուանուած, քուէարկեց աղտամիտների
հետ, իսկ միւսները միջին ճանապարհ ընտ-
րեցին: Նրանք չէր ներկայացան լայնստա-
ֆի նիստին, թէպէտ իշխան Բիւմարկին անձ-
նատուր կըրած նրանց առաջնորդները իւ-
րաքանչիւր անգամին առանձին հրաւի-
րատումս ուղարկեցին: Աղտամիտները ամ-
բողջութեամբ կառավարութեան դէմ քուէ-
արեցին:

Հաղորդած տեղեկութիւնը բաւական պարզ էր:
Իշխանը անցել էր ամառէ կամուրջից, այսինքն
կատարել էր այն սարսափելի պոստը ընտելի
տարափոխների միջով, որ այնքան անձնավտա-
հուծեամբ յանձն առեց նա: Այժմ թշնամին
գտնուած էր երկու հայ բանակներէ մէկտեղուած
և հեշտ էր երկու կողմից ջարդել նրան:
Մի քանի րոպէս առաջ ուրախալի լուր տա-
րածվեցաւ բոլոր հայ զինուորների մէջ, բոլորը
առեւելք սիրտ և արծաթ թուրք ստացան:
— Տղերք, ձեր հոգեւն մատաղ, ձայն տուեց
ծերունի զօրապետը, արագութեամբ իր գունդե-
րի միջից անցնելով:— այնպէս շարժվեցէք, որ
ոչ մի հողի ձեռքից բաց չը թողնէք:
Թշնամու զամբուրակները կրկին որոտացին:
— Այդ զամբուրակները մեր գանձն տարան,
ասաց հայ զինուորներից մէկը:— մինչև երբ զը-
րանց ձեռքում պիտի թողնենք...
— Հետո՞ւ կը խնդրէ... պատասխանեց մի ու-
րիշ զինուոր:
Այդ միջոցին թշնամու զօրքերի մէջ նկատ-
վեցաւ խռովութիւն: Նրանց հոտից նոյնպէս
կրակ էին թափում:
— Բայնստաֆի հասաւ... լսելի կըրան հարիւ-
րաւոր ուրախալի ձայներ:
Թշնամին սեղմվեցաւ երկու կրակների մէջ:
Բայց նա այնքան յամառ էր, որ հեշտութեամբ
անձնատուր չէր լինի: Կուրծ խրաբանչիւր կող-
մից, դանաղան կէտերի վրա, կատարութեամբ
շարժանակութեամբ էր: Օրը մուգված էր թանձր
ծխով:
Այդ միջոցին մի խումբ, Աւթանդիլ գնդապե-
տի առաջնորդութեամբ, գնդակների կարկուտի
միջից անցնելով, յարձակվեցաւ ձեռքէլ թշնա-
մու վաշտերը և տրեւել զամբուրակներին: Նը-
րանցից մէկը, մի երիտասարդ, առաջ անցնելով,

արկեցին և նրանց պաշտպանեցին կենտրո-
նականները: Բերլինի մէջ լուր է տարած-
ված, որ լայնստաֆի վճիռը չի խանգարի
իշխան Բիւմարկին այնու ամենայնիւ հրա-
ւիրել տնտեսական խորհուրդը, որի համար
նա միջոցներ է գտել այլ աղբիւրներից և
արդէն հարկաւոր կարգադրութիւնները ա-
րել է: Շատ կարելի է, որ նա այդպէս էլ
վարվել, իսկ միջոցները երբեք չեն պակ-
տի, քանի որ լայնստաֆի իշխան Բիւմարկի
անմիջական կարգադրութեանը ահազին մի-
ջոցներ է յանձնել: Միևնոյն ժամանակ մի
այլ լուր էլ տարածված է Բերլինի մէջ, որի
համեմատ լայնստաֆի մտադիր է խել այդ
միջոցները կանցըրել, ի թէ նրանք կը գործ-
դնեն լայնստաֆին վնասելու համար: Այդ
գործը կախված է լինի ապագայ լայն-
ստաֆից, բայց այժմ յոյս կայ, որ նոր պար-
լամենտը թոյլ չի տայ իրան անուշադիր
թողնել: Գերմանական լայնստաֆի հասկա-
ցաւ, թէ նրան ինչ ճանապարհով են տա-
նում և յայտնեց, որ չէ ցանկանում մեռ-
նել: Նոյնպիսի յայտնութիւն արաւ և դեր-
մանական հասարակութիւնը:

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԳԻԱՅԻՑ

Կ. Պոլսի, 11 յունիսի 1881

Այս օրերս ինձ հետ պատահած մի մասնաւոր
դէպք շատ անակնկալ արդիւնքներ արտադրեց,
որոնցից ամենահետաքրքիրը այն է, որ մուսու-
լման արիւնքներու միջոցով (Ջերմիկի Նաւագիւ)
լրագրող սկսեց մի շարք հետաքրքրական յո-
գութեան հարաւորակել. սոցանից մինչ ուղար-
կում եմ ձեզ ներկայեցել: Այդ յօդուածից դուր
կը տեսնէք այն միջոցաւորական կերպով, որով
Թուրքիան սկսել է վերաբերվիլ հայոց խնդրին
պարտ ու պատշաճ յարգանքով և շատ մեծ ա-
ռե երկնազուլ. բայց աւելորդ է յիշեցնել ձեզ որ
Թուրքիան ոչ մի գործին կարեւորութիւն չի տալ
մինչև որ մի վախ չի ունենայ նորանց: Ահա
այս վախն էր, որ այսպիսի ժամանակ ցանկալի
էր տեսնել Թուրքիայի սրտում, որի առաջին ու-
րախալի ապացոյցը տալիս է այսօր մի նշանա-
ւոր Թուրքական օրգան: Նոյնպէս այն օրը ասում
էր մի հեղինակաւոր անձը թէ չմեր ձայնը այն
ժամանակ կը սկսէ լսելի լինել Թուրքիային, երբ

արծուի արագութեամբ ընկաւ Թուրքացի գլխա-
ւոր զօրապետի վրա, և իր սրի մի հարուածով
նրան գետին տապալելով. իւրից դրօշակը: Այդ
միջոցին մի գնդակ անցաւ նրա ոտքի աղբիւր
միջից: Նա վեր բարձրացրեց դրօշակը, և շուրջ
Գաւիթի բէկ: Գուշով, ծիծաղելով ասաց.
— Եւ այդ ոտքից հէնց տուալ էլ կաղում
էի...
Եւ իբրեւ, նա երեսնացի կաղ Ռանէսն էր:
Գրօշակի յափշտակութիւնը ազդեց թշնամու
զօրքերի մէջ ընդհանուր վախոթութիւն: Նրա վրա
կարծիք գոյնում, նկարված էր Ալիի աջը, որ հա-
վանաւորութեամբ էր նրանց, որ ուժ և զօրութիւն էր
տալիս նրանց:
Բայց մի փոքր հեռու կատարվում էր սարսա-
փելի կոտորած: Աւթանդիլի խումբը կռոււմ
էր Թուրքացի թնդանթաթիկների հետ: Հայերը
աշխատում էին գրաւել թնդանթաթիկները. իսկ
Թուրքերը պաշտպանում էին: Այստեղ վառօդի
փոխարէն գործում էր սուր երկաթը: Հայոց
սուլթանները հրաժար էին կատարում: Արիւնք ա-
ռուակներով վազում էր: Մարդիկ տապալում
էին մինը միւսի վրա...
— Ալիիւն, մինչև երբ պիտի տանջես մեզ...
գուշեց Աւթանդիլ գնդապետը և իր ծանր սուրը
իջեցրեց մի վիթխարի թուրք զինուորի գլխին,
որը տանից աւելի վերք ստանալուց յետոյ, դար-
ձեալ ձեռքից բաց չէր թողնում թնդանթաթիկը:
— Եւ թնդանթաթիկ փողը զրկած պահելով, այն-
պէս էլ մնաց, միայն ձեռքով զուրկել թեքվե-
ցաւ մի կողմ, և տաք արիւնք շատուանի նման
դուրս ցայտելով խոր վերքից, ներկեց իր պաշտ-
պանած մահային անթիւր: Գնդապետը ձեռքով
գետին գլորելով գրակը, դուրս ելաւ թնդանթաթիկ:
Մնացած թնդանթաթիկները նոյնպէս անցան հայերի
ձեռքը:

Նորա աչքը կը սկսէ վախճալ հայոց խնդրի հե-
տանքները: Այս շատ և շատ ճիշտ է, վասն
որով մեծ հորհակալութիւն ուսումնասիրել մէջ
Թուրքիայի վերաբերմամբ սպասուելից պրօպո-
գանդ անողներին, նոյնպէս և այն հայ մամու-
լին, որը շարունակում է իր յարձակողական ըն-
թացքը Թուրքիայի դէմ: Տառապա աղբիւրից դի-
տեմ, որ ոչ մի յօդուած Մ. Պետերբուրգի և Մոսկ-
վայի ուսումնասիրողները, նոյնպէս և Վշակից
չեն անցնում այստեղի Թուրք խնդրագրութիւն-
ների ուշադրութիւնը, վասնորով փախուցել է,
որ մեր հայ երիտասարդները Մ. Պետերբուրգ և
Մոսկովա չը քնեն այսպիսի մի ստիպողական
րոպէսում:

Թուրք լրագրի յիշեալ յօդուածը այն աստի-
ճան արժանի է ուշադրութեան, որ տեղիս մի
Փրանսիացի լրագիր խօսելով նորա վրա, հետե-
ւաւ նրախօսութիւնը արեց. «Եթէ Չեքովիչի
Հաւաքիսին հարկը վրա կաշառ տային հա-
յերը, չէին կարող ի նպաստ իրանց մի աղբիւրի
յօդուած գրել տալ, որը գրեց նա իր այս հա-
մարի մէջ, վասնորով ցանկալի է, որ հայ երի-
տասարդները մի քանի դուռէ ևս կրկնեն Ա.
Պոլսի մէջ, որով Թուրք լրագիրները ստիպված
լինեն աւելի ընդարձակ խոստովանութիւններ
անել հայոց դրութեան և բարոյական ուժի վե-
րաբերմամբ»:

Ի հարկէ իրաւ է, որ Թուրքիայի սիրտը ահ
ու դող և կատկած ընկնելու չափ հայոց խնդրի
վերաբերմամբ, նա պիտի աշխատէր աւելի ճշշել
հայերին, բայց միթէ չը պիտի համազօրեց
վերջապէս այն ճանապարհեան մէջ թէ քանի
լարը շատ ձգվի, նա այնչափ շուտ կը կտրվի.
քանի Թուրքիայի ճշշումները ստատական, այն-
չափ էլ հայոց աղաղակը պիտի աւելի բարձրա-
նայ Եւրոպայի առաջ և դատի դեկլարացիաները
աւելի մեծ էներգիայով և համարաշխութեամբ
պիտի գործեն իրանց նպատակին հասնելու հա-
մար: Թող ուրեմն համոզվեն կոյր հրապարակա-
խօսները, որ մի քանիսն իրանց ընթացքը
և կատարվող պրօպոգանդան բնաւ չունէ և չէր
էլ կարող ունենալ այն «ազդեցութեան» հետեան-
քը, որի մասին մինչև հիմա ևս շարունակում են
ակնարկել անցեալ տարի Մ. Պետերբուրգի ուսու-
մանի մէջ աղմուկներ բարձրացող մէկ վրա...
Միթէ ժամանակ չէ թողնել գետնափոր և խա-
ւարաշրջիկ կենդանիների դերը, տեսնելով նորա
մէջ իրանց կարծեցեալ չըջանալից պրօպո-
գանդութիւն, խոհեմութիւն և այն աղբիւրի
ուժեղութիւնը: Այստեղ էլ կան աղբիւրի գետնա-
փոր արարածներ, որոնք ասում են. «Երկուսը,
Թուրքիան մեզ վրա առաջ այնչափ կատկածաւոր

Մինչ այստեղ այս էր կատարվում, միւս կող-
մից Բայնստաֆի իշխանը իր որոտուելից ձայնով
գոռում էր իր զինուորներին:
— Տղերք, չարժէ դրանք վրա վառօդ փչաց-
նել, ծակծկեցէք, ծակծկեցէք...
Եւ հայ զինուորները գրոհ տալով, մէկը սրով
միւսը նիզակով, միայնը սուլումով, սմանք հաս-
րակ քարերով խորտակում էին պատահած գի-
նուորին: Կոտորածը երկու կողմից ևս տեսց մի
քանի ամբողջ ժամ, մինչև թուրքերը աղաղակե-
ցին:
— Ապեան... ապեան...
Այսինքն անձնատուր ենք լինում կամ հալ-
տակում ենք:

Բայնստաֆի իշխանը և նրա հետ շատերը այն
կարծիքը յայտնեցին, թէ պէտք է բոլորին կո-
տորել, բայց ծերունի զօրապետը ընդդիմացաւ,
հրամայելով, միայն զինաթափ անել և գերի
վերցնել: Թշնամու անտուճանքը, սպալակները և
անաղկն քանակութեամբ ազդամթերեց ընկան
հայերի ձեռքը: Այդ ճակատամարտի մէջ հայե-
րը կորցրին մօտ 300 հոգի, բայց թշնամուց ըս-
պանուածների թիւը 2,000-ից աւել կը լինէր,
չը հաշուելով վրաւորներին, որ համեմատա-
բար խոտ շատ էին:
— Այդ բոլոր դաժնալի մէջ, ասաց Բայնս-
տաֆի իշխանը մօտենալով ծերունի զօրապետին,
— մի ուրախալի բան կայ միայն, որ մեր ձեռք
ձեռքից թշնամու թնդանթաթիկները, որ մենք չու-
նէինք:

— Այդ ուղիղ է, բերդը պաշարելու ժամանակ
հարկաւոր կը լինեն մեզ, պատասխանեց ծե-
րունի զօրապետը իր սովորական բարի ժպիտով:
— Եւ կարծում եմ, որ բէկն էլ շատ դուր է լի-
նի զրանով. նա սիրում է թշնամու դէնքերը
խելի, յետոյ իր դէմ գործ դնել:

աչքով չէր նայում, մինչդեռ հիմա հայր բնա-
ւանաւորում չունէ, այլ նա հաւասարակեց յոյներին
և բոլորներին Թուրքացի մեծամեծների առաջ:
Ահա ձեզ հայն ստրկաւորութեան մի նշան. կարծես
որ հայոց ազգին շատ մեծ կորուստ է, որ Թուրք
փաշաները չեն ծիծաղի հայ էֆենդիների երեսին
նոյնա ուսերը բարեկամաբար թափելով. այդպիսի
կեղծ քարեկամութիւնից ինչ արդիւնք ստացանք
մինչև հիմա, որ ամբողջապէս այժմ հայի, յոյնի և
բոլորների համաձայն լինելու վրա Թուրքացի ա-
ռաջ: Վերջապէս միթէ յոյների և բոլորների
պէս բաղադրական և ազգային ինքնաճանաչութիւն
ցոյց տալը աւելի նախապատիւ չէ. քան թէ ան-
գոյն, առանց որ և է ձգտումների և ազգային
հպարտութեան լինելը: Այստեղի էֆենդիների
տեսակիցն է անշուշտ և մի քաղաքի մի «չառ
խոհեմ», շրջապես և հմուտ: Հայ լրագիր, որի
շրջապատութիւնը այն աստիճան է համարում, որ
նոյն իսկ քաղաքի մէջ մի օտար մարդ ոչ լսել
է և ոչ տեսել «խոհեմ և հմուտ» խմբագրի և-
րեսը... Այսպիսիներն են դեռ յանդիմանում ու-
րիշներին իրատ կարգով, բայց աւել ճիշդ՝ ֆե-
լիտաների մէջ մտած խեղճատակութիւն ու
պամպուլտութիւն անում:

Գրիգոր Նիկողոսեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— Հայրենիք: լրագրում կարգում ենք հետե-
ւեալը: Վրէժան յանձնարարումը մը նը-
շանակեց բարենորոգմանց ծրագիր մը պատրաս-
տելու համար ըստ 61-որդ յօդուածի Բերլինի
դաշնագրին, որ Արմենիոյ վարչութեան կը վե-
րաբերի: Այդ ծրագիրը տէրութեանց պիտի ներ-
կայացվի և Բ. Գուռը նախաձեռնութիւն պիտի
ունենայ բարենորոգման ներմուծման գործին
մէջ: Յոյսեր կը յայտնվին թէ Վրէժանը տեսակ
մը բարենորոգման ծրագիր հրատարակել պիտի
տայ ընդհանուր գաւառաց վարչութեան համար,
նպատակ ունենալով առաջին առնուել Կրօնայի
դիւանագիտական միջամտութեան:

— Ա. Պոլսի լրագիրներում կարգում էր: «Մէ-
տեւեր» կրտէ թէ օսմաննան նախարարը կիրա-
ւէ օր Բ. Գուռը ժողով գումարելով, Հայաս-
տանի մէջ գործադրելի բարենորոգմանց ծրագիրը
քննել են, զոր վեհ. Վրէժանի վաւերացնել
տալէ ետքը, դիւանագաղ պիտի ներկայացնեն»:

— Նորվեգիայի պարլամենտը մերկեց թաղա-
ժապանգի տարեկան ուժովը 50,000 մարկով
աւելացնել:

— Մարտէլի մէջ անբաւականութիւնները Փրան-
սիացիների և խաղաղների մէջ շարունակվում
են:

— Չափերի մէջ դարձեալ պատահել է մի երկ-
րաշարժ:

— Բայց արեւոյ մնաց սոյլ բէկը, չէ երևում,
հարցրեց Բայնստաֆի իշխանը իր չորսը նայե-
լով, կարծես բէկը նրանց հետ լինէր:

Գեռ ծերունի զօրապետը չը պատասխանած,
յայտնվեցաւ մի սուրանգակ, որը հաղորդեց
թէ բէկը Թուրս իշխանի հետ և իրանց մօտ ու-
նեցած զօրքերով մօտան կրծի մէջ, այնտեղից
անցնում են դէպի բերդը գնալու համար: Նա
աւելացրեց, որ բէկին արդէն յայտնի էր կա-
տարված յաղթութիւնը, և այդ պատճառով նա
աներկիւղ կերպով մտաւ կրծի մէջ, գիտէր, որ
ճանապարհը թշնամիներից մարքված է:

— Իսկ Միսթար սպարապետից լուր չունե՞ք,
հարցրեց սուրանգակից ծերունի զօրապետը:

— Ունեմ, նա էլ մի գեղեցիկ յաղթութիւնով
դուրս է եկել Կարա-բուրունի անցքից, որ բըռ-
նած էր թշնամիներով: Այժմ բերդին հասած կը
լինի սպարապետը:

— Իսկ մենք ինչ սպասելիք ունենք, ասաց
Բայնստաֆի իշխանը, և հրաման տուեց ճանա-
պարհ ընկնելու:

Գերիների թեքերը կապեցին չուաններով, նը-
րանցից խլած ռազմաթիւքը բարձեցին նը-
րանց սպալակների վրա, նոյն սպալակների վրա
տեղաւորեցին և հայ վրաւորներին, յետոյ ճա-
նապարհ ընկան:

Բոլորովին մոլոր էր, երբ բէկը Թուրս իշխա-
նի հետ մի կողմից, Միսթար սպարապետը միւս
կողմից, հասան բերդին: Երբ Բայնստաֆի իշխանը
մէլք-ֆարսագանի հետ եկան, սկսվեցաւ պա-
շարմը:

(Կը շարունակվի)

«ՄՇԱԿԻ» ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ

ՄԻԱԶԳԱՅԻՆ ԲՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 18 յունիսի. Երէկ թա-
գաւոր կայսրին արժանացան ներկայանալ
Ալիք-Ալի-Սարգսի և Կոլ-Բատիր տեղի-
ցնելը, որոնցից վերջինը ներկայացրեց իր
պատերազմական սուրը, յայտնելով որ նրա
հետ միասին պատրաստ է գոհել իր կեան-
քը Թագաւորի համար: Կայսրը բազմա-
րացրեց նրանց մի քանի հարցմունքներով
և անձամբ շնորհեց նրանց մի-մի ոսկե ժա-
նետը 2 շաբաթով: Տեղեկներին հայրե-
նիք վերադառնալը նշանակված է այսօր:
Կ. ՊՕԼԻՍ, 17 յունիսի: Թիւրքաց երկու
Ֆրէզական և երկու կորիւններ ուղեոր-
վեցան դէպի Կրիտ կղզին, որպէս զի այն-
տեղ գտնվող Մուզաֆէր կորվէտի հետ ու-
ղեւորվին դէպի Տրիպոլի: Յունաստանի
հետ անմիջական դաշնագրութիւնը ստու-
րագրված կը լինի ուրբաթ կամ շաբաթ:
Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 18 յունիսի: Պետական
բանկի 5% տոմսակը առաջին շրջանի ար-
ժէ 96 ր., երկրորդ 94 ր. 37 կ., երրորդ
94 ր. 50 կ., ներքին 5% տոմսին փո-
խառութեան տոմսակը 227 ր. 50 կ., երկ-
րորդ 220 ր., 50 կ., արևելեան առաջին 92 ր.
87 կ., երկրորդ 92 ր. 87 կ., երրորդ 92
ր. 75 կ., ոսկի 8 ր. 5 կ.: Ռուսաց 1
լուբլ 1 օնգոնի վրա 24.59 պէնս, որոսաց
100 ր. Համբուրգի վրա 211 մարկ 25 պֆ.,
Փարիզի վրա 260 ֆրանկ 50 սանտիմ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 18 յունիսի: Պետական
բանկի 5% տոմսակը առաջին շրջանի ար-
ժէ 96 ր., երկրորդ 94 ր. 37 կ., երրորդ
94 ր. 50 կ., ներքին 5% տոմսին փո-
խառութեան տոմսակը 227 ր. 50 կ., երկ-
րորդ 220 ր., 50 կ., արևելեան առաջին 92 ր.
87 կ., երկրորդ 92 ր. 87 կ., երրորդ 92
ր. 75 կ., ոսկի 8 ր. 5 կ.: Ռուսաց 1
լուբլ 1 օնգոնի վրա 24.59 պէնս, որոսաց
100 ր. Համբուրգի վրա 211 մարկ 25 պֆ.,
Փարիզի վրա 260 ֆրանկ 50 սանտիմ:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

«Խ Ե Ն Թ Ը»

ԱՐԿԱՇՆԵՐ ՎԵՐՋԻՆ ՌՈՒՄ-ԹՈՒՐԿԱՆ
ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ ԲԱՅՅԻԻ
Տպված մաքուր թղթի վրա, գիրքը բազ-
մանում 400 երեսից: Թիֆլիսում ծախվում է
«Մշակի» խմբագրատանը, «Կենտրոնական
գրադաճառանոցում», «Կովկասեան գրա-
վաճառանոցում» պ. Զաքարիա Գրիգորիան-
ցի մօտ, և պ. պ. Շահինեանցի, Բազար-
ջեանցի, Հովսեփեանցի ծխախոտի մագազին-
ներում:

Գինն է 1 ռուբլ 20 կոպ:

2,400 ՐՈՒԲԼՈՎ ծախվում է ՊԱՐՏԵՋ և
ՀՈՂ տան համար: Հարցնել անգլիական
խանութի մէջ: 6—6

ՐՈՍՏՈՎ ԳՈՆԻՎՐԱՎ ԲԱՆԿԻ ԳՈՐԾԱՐԱ-
ՏԵՐ ԵԱՍ. Ս. ԿՈՒՇՆԱՐԵՎՈՎ յայտնում է հե-
տևեալը. Իմ ծխախոտի արդիւնաբերու-
թեան մեծ պահանջը զրգեց Թիֆլիսի գոր-
ծարանատէր Պիրալով և ընկ. և Գալի-
գովին նմանվել իմ արդիւնաբերութեան ձե-
ւին զանազան անուններով, մանաւանդ «ԼՈ-
ՐԻՍ-ՄԵԼԻԲՈՎ» և «Գեներալ ԳԵՏՄԱՆ» և
«Գեներալ ՍԿՈՐՈՒԵՎ» և Նախագրու-
ածներով իմ ծխախոտը գործածողներին, խնդրում եմ
ուշադրութիւն դարձնել իմ ֆիրմայի հե-
տևեալ նշանների վրա. 1) Հրապարակա-
հատում թուղթի 1865 թուականի Մօսկվայի
հանդէսից, 2) Ոսկեայ մեդալ Մօսկվայի
տեխնիկական հանդէսից 1872 թ., 3)
Պատուաւոր կարծիք 1873 թ. Վիեննայի
աշխարհահանդէսից, 4) մեծ մեդալ 1876 թ.
Ֆիլադելֆիայի միջազգային աշխարհահանդէ-

Մինչև առաջիկայ սեպտեմբեր լըյա կը
տեսնի Ֆիգիկա կան, Ժողովրդա-
կան և քաղաքական ԱՇԽԱՐՀԱՐՈՒ-
ԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ հայ աղայոց և օրիոր-
դական ուսումնարանների համար: Յանկա-
ցողները կարող են դիմել ուղղակի աշխատա-
սիրողին հետևեալ հասցեով:

Тифлисо. Армянская Духовная Се-
минария Нерсесьяна. Учителью А.
Тер-Акопьянцу.

ԿՐՈՆԱԿԱՆ ԵՒ ԲԱՐՈՑԱԿԱՆ ԲՐՈՇԻՐՆԵՐ
ՌՈՒՍԵՐԷՆ, հայերէն և վրացերէն
Ռուսերէն 30 տեսակից 30 հատը 1 ր.
հայերէն 3 տեսակից 50 հատը 1 ր. վրա-
ցերէն 7 տեսակից 50 հատը 1 ր. մեր
հասցեն. Тифлисо, Елизаветинская ул.
№ 71, Аврааму Амирханьянцу.

1—20 (2)

144 Արժուրէնու գաղթէա 144
ամենամեծան պահեստ
մերկի և հայերէններ:

Հրատարակութեամբ Ներսիսի Սիմէոն-
անց լըյա տեսաւ գերմանացի բժիշկ Երէնի
«Տնային բժշկական մարմնամարզութեան»
գրքոյի հայերէն թարգմանութիւնը 45
պատկերով: Երբ միջոցաւ կարելի է
կատարել առողջապահական բազմաթիւ
մարմնամարզական կրթութիւններ ամեն
տեղ, ամեն ժամանակ և առանց զործիքի:
Նա յարմարացրած է ամեն հասակի արանց
և կանանց համար: Գինն է 40 կոպ. ծախ-
վում է «Կենտրոնական և Կովկասեան գրա-
վաճառանոցներում», նոյնպէս և պ. Մ. Վար-
դանեանցի մօտ. Тройцкий пер. типо-
графия Вартачанца, в Тифлисе.

ԿԱՐԻ և ԶԵՒԻ ԳԱՍԵՐ ամենանոր եղա-
նակով ԳՐԱԳՐՈՒԹԵԱՆ օգնութեամբ: Խեղճ
աղջկերանց համար առանձին պայմաններով:
Ընդունվում են կանանց և երեխաների հա-
մար ԿԱՐԵՐ: Ծախվում են կարերի նոր ձե-
ւեր թղթից շինված, պատրաստվում են
մեքենայով ծախի: Կուկի, Նիկոլայեվսկայա
փողոց, տուն № 87:

սից, 5) Արծաթէ մեծ մեդալ 1878 թ.
Փարիզի աշխարհահանդէսից, իսկ այդ նշան-
ները չունեցող արդիւնաբերութիւնը ԽՆԻ-
ՐԵՄ ԿԵՂԾ ՀԱՄԱՐԵԼ: ՄԱԿԵԳՈՆԵԱՅԻՑ նո-
րերուն ստացայ ամենալաւ ՀՈՏԱՆԵՑ ԾԽԱ-
ԽՈՏ: Լաւ յատկութեան ծխախոտ սիրող-
ներին խնդրեմ դիմել Թիֆլիսի մէջ. Սպի-
րիդոն Խվանովիչ Պապովին, Բաժնեկոմիտեի,
Բաշանդուրովին, Միկիրովովին, Բէժանե-
վին, Տէր-Գրիգորեանց և ընկ. և դէպքս, որ
գտնվում է Գօլովինսկի փողոցի վրա, Խշխան
Բագրատիւն-Մուխրանսկու տունը: ԱՅՊ ԱՆ-
ՋԻՆԲ ՈՒՂԱԿԻ ԽՄ ԳՈՐԾԱՐԱՆԻՑ ԵՆ
ՍՏԱՆՈՒՄ ԾԽԱԽՈՏԸ:

Բոստովի 1-ն գրիգորի վաճառական և
ծխախոտի գործարանատէր ԵԱԿՈՎ ՍԵՄԵՆ-
ՆՈՎԻՉ ԿՈՒՇՆԱՐԵՎՈՎ:

10—12

ՎԻԵՆԱՅԻ ՄԵՐԵԼ (աթուներ և բաղաժառանգ) ծախվում են մեծ
քանակութեամբ և մանր, միջին փողոցում Կատարիկաց փողոցի տնիկնում ՄԻ-
ԲԱՅԵԼ ՏԵՐ-ՆԻԿՈԼՈՍԵԱՆԻ պահեստում:

Օտարաբաղաւոր կարող են դիմել այս հասցեով. Тифлисо, Михаилу
Н. Тер-Никогосову.

24—150

Արդէն ուղարկվեցաւ իւր բաժանորդներին ԲԱՅՅԻԻ «ԽԵՆԹԸ» տնու-
նով վիզաստնութիւնը: Նոր գնել ցանկացողներին խնդրում ենք դիմել ՇՈՒՇԻ,
կամ ուղղակի հրատարակչին, կամ Մահմադ-Յակոբեանցի տպարանը: ԲԱՅՈՒ
պ. Ալեքսանդր Թարխանեանցին, ԹԱՐԱՎԷՋ՝ պ. Գրիգոր Բէշանեանցին.
Հրատարակչի հասցեն. Шуша, вь конторѣ Аргуняна АБѢЛУ АП-
РԵՏԻԱՄՍ.

Վերականգնող ՄԱԿ-ՄԱՍ-
ՏԵՐ, մազերը տարացնող և նրանց
ԲՆԱԿԱՆ ԳՈՑՆԸ վերադար-
ձնող: Գինը 2 ր. շերտ, ՓՈՍՏՍ-
ՅՈՎ ուղարկված 2 ր. 49 կոպ:
ԱՆԳԼԻԱԿԱՆ խանութի մէջ:



Մի և նոյն տեղը ԽԵՆԱՅԻ
ԽԵՂ, մազերը տարացնող հա-
մար, 1 ր. տանը փրձին գլխա-
ցաւ դէմ, ՏՈՒԱԼԷՏԻ ՍԱ-
ՊՈՆ և հոտաւէտ ջրեր և այլն:
85—100

Ա Ն Գ Լ Ի Ա Վ Ա Ն Մ Ա Գ Ա Ջ Ի Ն Ո Ւ Մ			
Հա.մ.մատեցէթ թէյի ֆունտը	1 ր. 5 կ.	Մատկայից բերքող թէյի հետ	Ֆ. 1 ր. 30 կ.
—	1 ր. 10 կ.	—	Ֆ. 1 ր. 40 կ.
—	1 ր. 20 կ.	—	Ֆ. 1 ր. 60 կ.
—	1 ր. 40 կ.	—	Ֆ. 1 ր. 80 կ.
—	1 ր. 60 կ.	—	Ֆ. 2 ր. —
—	1 ր. 80 կ.	—	Ֆ. 2 ր. 50 կ.
Ամենալաւը	2 ր. —	—	Ֆ. 3 ր. —
97—100			

ՎԵՐԱԿԱՆՆԵՐ 4 ր., ծրծողներ 1 ր.,
ծալվող աթուներ 1 ր. 50 կ., ՓԱՅՏ-ԱԹՈՒՆ
4 ր., ԲԱՅԱԿԱՌՈՒ-ՄԱՀԱԿԱԼ 10 ռուբլ և
տեղի, թէյի բաժակներ 25 և 30 կ., մի
աման քորոցներ 50 կ., պատեղա ծխողների
համար 60 կ. ֆունտը, անգլիական ՎԱՆԵԱ-
ՆԵՐ և այլն ծախվում են ԱՆԳԼԻԱ-
ԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ:
10,000 զոյգ գուլթաներ 25 կ.—ից զոյգը,
10,000 զոյգ կանանց ԳՈՒԼԲԱՆԵՐ 30 կ.—
1 ր., 7,000 մատուցարաններ 5 կ.—5 ր.,
1,000 ՄԱՀԱԿԱԼՆԵՐ 5 ր.—35 ր., 400
արշին բոմբէյ. 1 ր.—1 ր. 30 կ., պա-
րուսիա 40 կ.—1 ր., 300 հատ բէֆօլթեր
4 ր.—35 ր., 700 այբում ԿԵՍԱԿԵՆՈՎ, 10,000
ֆունտ թէյ, թէյ-ՍՄԱՆՈՎ 1 ր. 65 կ.: Եր-
կաթէ գրիչներ իւրաքանչիւր ձեռքի հա-
մար: Ծախվում են ԱՆԳԼԻԱԿԱՆ
ԽԱՆՈՒԹԻ մէջ:

6—100

ԾԱԽՎՈՒՄ ԵՆ 30% ԷԺԱՆ
ԳԱՆ ԹԵ ՈՒՐԻՇ ՏԵՂ. մաքուրա-
նէր, կոնֆէկաներ, ԿԱԿԱՍ, բրինձ, Ա-
ՄԱՆԵՂԷՆ, բոլորներ, թասեր, երես լուա-
նալու ամաններ, չայնիներ, ԲԱՅԱԿԱՆԵՐ,
կերակրի ամաններ (судки), մատուցարան-
ներ, ԿՈՂՊԵՐՆԵՐ, ԳԱՆԱԿԱՆԵՐ, գզաններ,
ԳՐԻՋՆԵՐ, թուղթ, մատիաներ, տետրակ-
ներ, ՀՐԱՑԱՆԵՐ, ԲԵՎՈԼԱԿԵՐՆԵՐ, այբում
ներ, ՄԱՀԱԿԱԼՆԵՐ, ՀԱԳՈՒՍՏ, արիօ, պա-
րուսիա, թաշկինակներ, երեսբիւններ, կիծա-
կա, գուլթաններ, ԹԱՐԵՐ, ՊՈՐՏ-ՎԷՅԻ, խե-
րեւ, կոնեակ և այլն: Թէյ մեծ քանակու-
թեամբ ՎԱՅԱՌԱԿԱՆՆԵՐԻ համար ՊՈՒՐԻՇ
44 ր., 46 ր., 48 ր., 50 ր., 52 ր., 54
ր., և այլն: Այդ բոլորը կարելի է գտնել
ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ:
Մի և նոյն տեղը էժան գտնվ. ԵՐԵՅԵՏ մա-
զնեղի, խմոր ԾԱՐԱԽԻ գէմ, ԽԵՆԱՅԻ գի-
նի ջրովի գէմ, կարթուս փՈՇԻ, հեղուկ
և ՍԱՊՈՆ, բժշկական թուղթ փառերկոզե-
տի համար, պարսկական փոշի:

20—100

Մի երկուսարդ, որ գիտէ հաշուապահու-
թիւն, ռուսերէն և հայերէն (двойная
италианская бухгалтерия) ցանկանում է
կանտորէի պաշտօն. հասցին կարելի է ի-
մանալ պ. Աւետիք Էնֆրանսեանցի գրաւա-
ճառանոցում:

Въ Редакціи газеты
«МШАКЪ»
Продается
«ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНИЕ
ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ»
Д. Григорія АРЦРУНИ.
Брошюра напечатана въ Москвѣ.
Цѣна 25 коп.

Արդէն վաճառվում է
ԻՆՁ ԲԱՆ Է
ԺԱՆՏԱԽՏԸ
Ինչ բանով կարելի է փրկուել նորանից
և այլ տարափոխի տկարութիւններից: Ժո-
ղովրդական և հասարակաց մատչելի խրատ
բժիշկ Պ. Ա. Նիկոլայ:

Թարգմանութիւն Ա. Ս. Գուլամիրանց
Գինն է 15 կոպ. 100-ներով գնողներին զի-
ջումը կը լինի: Մեր հասցեն՝ Въ Эривань
А. Гуламирянцу